Ղազան եկած (ուր ի միջի այլոց պահվում էր Օրիի մահից յետոյ մնացած իր հարուստ ստացուածքը՝ գրանց թուում եւ հրացաններ ու ատրճանակներ) եպիսկոպոսին արգելում են եւ բանդ են դնում, թէեւ ինքը՝ Յովակիմ եպիսկոպոսը, ոմն աւագ երէցի է այս վերագրում։ Բանդից նա գիմում է Սարաթովու հայերին եւ Պետրոս կայսեր՝ ամենայն հաւանականութեամբ 1719ին կամ 1720ի սկզբին, որովհետեւ նոյն թուի Հոկտեմբերին նա արդէն վախճանած է բանդումն։

(Արտագրեց բնագիրներից Գր. Խալաթեանց, Մոսկոտա, 10 Մարտի 1911։)

1709 թ. Յովակիմ եպիսկոպոս գալիս է Մոսկուա Աղէքսանդր կաթողիկոսի կոնդակով եւ սուրբ միւռոնով։

1710 թ. գնում է Ամստերդամ ինչ որ Տէր Յովհաննէսից մնացած ինչքերի համար եւ մնում է մինչեւ 1711 թ.

1711 թ. Յով. եպիսկոպոս գնում է Հռոմ (Հռօմ) Ալեկսանդրիա եկեղեցու համար եւ արգելվում է այստեղ վեց տարի. ճանապարհից գրում է թուղթ կաթողիկոսին։

1717 թ. վերադառնում է Ամստերդամ եւ 3—4 ամիս մնալուց յետոյ գնում է Մոսկուա։

1718 թ. նա Մոսկուա է (փետր. 27) դարձեալ, ինչպէս երեւում է իր գրած մի նամակից Տէր Եղիսէին՝ Ամստերդամ։

1718 թ. նա գնում է Ղազան (գուցէ հայրենիք վերադառնալու դիտաւորութեամբ), ուր եւ արգելվում է եւ բանդարկվում Մինաս վարդապետի մեղադրութեամբ.

կուա է, ինչպէս երեւում է նրա մի նամակից նոյն օրից գրուած Տէր Եղիսէին Ամստերդամ։